պետին և այլ ամ սբ. տնօրինականացն քի Ս., որ աստ կան հաւաքեալ ի սբ քաղաքս Երսղմ. ի թվականիս Հայոց ՌՁԴ (= 1635) ամին. ի հայրապետութեան սբ Աթոռոյս Երսղմ քաղաքիս տեառն եղբարն Յակոբայ, տէր Գրիգոր արքեպիսկոպոսին ...: ... որ ստացայ սբ աւետարանս յարդար վաստակոց, որ բաղում աշխատութեամբ և տառապանաւք գրեցի և ծաղկեցի յիշատակ բարի հոգւոյ իմոյ և ծնողաց, հաւր Բաշարաթին և մօր Ինախաշին և եղբարցն, տէր Յովհաննէս կրօնաւորին, և Շերբեկին և կողակցւոյն իմոյ Գուլաղին և իմ որդւոյն տէր Յովհաննէսին և կողակցին Փաշին և դստերն Գուլաղին և իմ քերց Զանաղին և իւր որդւոցն և Գօղաշային և իւր որդւոցն, և Փաշին և իւր որդւոցն եւ իմ հաւր եղբօրն Աւետիսին եւ իմ մեծ պապին Սիմաֆերիին ...»: (Խապ. Ցուց. տեսր և. էջ 350-352, նաև ՄՁ. Թ. 532):

ՄԵՍՐՈՊ (մեռ.) ԱՂԵՔՍԱՆԴՐԵԱՆ, ԲԱԲԵԼՈՆՑԻ.— 1834 ին Ս. Յակոբի կը յիշատակէ ոսկիէ կանթեղ մը. (տե՛ս Ցուց. պ.):

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՍ. ԿԵՍԱՐԱՑԻ. — Նախորդ Առ. Ադրիանուպոլսոյ, Կեսարացի Աւետիք արքեպս.ին հետ, Թէոդորոս պտրք.ի ժամանակ, վարչութեան որոշմամբ քննչական պաշտօնով Ս. Յակոբի վանքը կ'այցելէն և ձեռք քաշել կուտան այն աշխարհական դանձապետներուն՝ որոնց գործառնութիւններուն հետևանքով տրտունջներ եղած էին. (Սաւաչան, էջ 1139):

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՍ. ՍՄԲԱՏԵԱՆ, ՆԱԽԻՋԵՒԱՆՑԻ.—Մբ. Ս. Էջմիածնի. Ծ. 1833ին. Զա. 1857ին. իսկ եպս. կը ձեռնադրուի 1872ին. արքեպս. 1888ին. կթղ. տեղապահ 1895ին. ուխտաւորութեամբ կ'այցելէ 1910ին Ս. Յակոբի վանքը ուր կը վախճանի 1911ին: Վարած է զանազան առաջնորդական և վանական պաշտօններ, ինչպէս նաև ունի ազգագրական հրատարակութիւններ. տեսնել իր ցիսիասար կենսագրութիւնը. իր Նկարագիր Ս. Ս. վանուց Սաղեանի գիրքը (էջ 555-568):

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՍ. ՍՈՒՐԻԱՍԵԱՆ.— Ծ. 1834 ին Էտիրնէի մէջ. աշկ. Սարգիս պտրք. Գուլումճեանի. քարտուղար փոխանորդարանի 1852 ին. Զա. 1857 ին. կ'այցելէ Ռումանիա (1857-58). քարտուղար պատրիարքարանի 1860 ին. եպս. կը ձեռնադրուի 1864 ին. քննչական պաշտօնով կ'այցելէ Ս. Յակոբի վանքը 1864 ին: Վարած է քարոզչական եւ առաջնորդական